Գործընկերություն հանուն Սյունիքի

Funded by the European Union

People in Need

WINNET GORIS

Հայկական Կարիտաս Armenian Caritas

Տեխնիկական բնութագիր

ՀՀ-ում երեխաներին և տարեցներին տրամադրվող խնամքի ծառայությունների վերանայումը և ֆինանսական գնահատումն իրականացնող փորձագետի/փորձագետների խմբի/ընկերության ընտրության վերաբերյալ

Ծրագրի մասին

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագիրը, որն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից՝ «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի և «Հայկական Կարիտաս» Բարեսիրական ՀԿ-ի հետ համագործակցությամբ, նպաստում է Սյունիքի մարզի բոլոր յոթ համայնքներում սոցիալական պաշտպանության ավելի դիմակայուն համակարգի ձևավորմանը, աջակցում համայնքային սոցիալական ծառայությունների կայուն ֆինանսավորմանը և մարզի ամենախոցելի բնակչության կարիքների արդյունավետ արձագանքմանը՝ նպաստելով աղքատության, անհավասարության և խոցելիության մակարդակի նվազմանը:

Ոլորտային բարեփոխումներին ուղղված այս ծրագրի շրջանակում գործընկեր կազմակերպությունները սերտորեն համագործակցում են ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և ակտիվ խմբերի, ինչպես նաև Սյունիքի մարզի բոլոր յոթ համայնքապետարանների տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) հետ՝ համատեղ մշակելով համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորման և մատուցման կայուն մեխանիզմներ:

Ծրագրի տևողությունը 36 ամիս է:

Հիմնական նպատակը

«Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը փնտրում է փորձառու փորձագետների՝ աջակցելու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ երեխաներին և տարեցներին տրամադրվող առկա

ծառայությունների վերանայման և ֆինանասական գնահատման հարցում: Վերոնկարագրյալի նպատակն է բարձրացնել ցերեկային խնամքի կենտրոններում, ինչպես նաև տնային պայմաններում տրամադրվող ծառայությունների որակը և արդյունավետությունը՝ ինչպես երեխաների, այնպես էլ տարեցների համար: Արդյունքում կառաջարկվեն և կմշակվեն նոր մոդելներ՝ հիմնված տեղական և միջազգային փորձի, քաղված դասերի, երեխաների և տարեցների խնամքի ոլորտում առկա մարտահրավերների վրա:

Խնամքի այս ծառայությունների ուսումնասիրությունը և վերանայումը ոչ միայն կներառի ծառայությունների մատուցման օպտիմալացում՝ երեխաների և տարեցների բազմազան կարիքները բավարարելու համար, այլ նաև ենթադրում է այդ ծառայությունների հետ կապված ֆինանսական բաղադրիչների համապարփակ վերլուծություն: Ծախսերի կառուցվածքը և ընթացիկ ծառայությունների կայունությունը հիմք կհանդիսանան ոլորտային քաղաքականության փատահեն մշակման համար: Միաժամանակ երեխաների և տարեցների խնամքի ծառայությունները կարգավորող իրավական դաշտի վերանայումը ևս հիմք կհանդիսանա պետական ընթացակարգերի և միջազգային լավագույն փորձի մոտարկմանը:

Պահանջվող փորձագետերն են՝

- Երեխաներին տրամադրվող խնամքի ծառայությունների փորձագետ
- Տարեցներին տրամադրվող խնամքի ծառայությունների փորձագետ
- Իրավական փորձագետ
- Ֆինանսկական/Բյուջետավորման փորձագետ

Ընտրված փորձագետները պետք է իրականանցնեն հետեւյալ գործողությունները.

Գործող մոդելների վերանայում և թարմացում

- Երեխաներին ՀՀ պետական և ոչ պետական ցերեկային կենտրոններում մատուցվող ծառայությունների համապարփակ ուսումնասիրություն և վերանայում:

- Տարեցներին ՀՀ պետական և ոչ պետական ցերեկային կենտրոններում մատուցվող ծառայությունների, ինչպես նաև տնային խնամքի ծառայութունների համապարփակ ուսումնասիրություն և վերանայում:
- Ոլորտային բացերի վերհանում, որոնք պահանջում են վերանայում, բարելավում՝ ապահովելով խնամքի որակի բարձրացումը, մատչելիությունը և ներառականությունը՝ հիմք ընդունելով գործող օրենսդրական դաշտը:
- Առաջարկների ներկայացում գործող մոդելներում, ինչպես նաև նորարարական նոր մոդելների ներկայացում՝ հիմք ընդունելով տեղական և միջազգային լավագույն փորձը, ոլորտում հանդիպող մարտահրավերները, ինչպես նաև քաղած դասերը:

Ֆինանսական վերլուծություն

- Երեխաներին և տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների մատուցման ֆինանսական բաղադրիչների վերլուծություն՝ ներառյալ անձնակազմի, նյութատեխնիկական բազայի և այլ ծախսերը:
- Գործող խնամքի ծառայությունների մոդելների և առաջարկվող նոր այլընտրանքների ծախսարդյունավետության և կայունության ֆինանսական գնահատում:
- Ռեսուրսների բաշխման, ծախսերի կառավարման օպտիմալացման և ծախսարդյունավետությանն ուղղված առաջարկների ներկայացում՝ վերոնշյալ ծառայությունների կայունությունն ապահովելու ուղղությամբ:

Իրավական դաշտի վերանայում

- Երեխաների և տարեցների խնամքի ծառայությունները կարգավորող տեղական և միջազգային իրավական դաշտի համապարփակ վերանայում:
- Բացերի, անհամապատասխանությունների և չկիրառվող դրույթների վերհանում օրենսդրական դաշտում:
- Փոփոխությունների/առաջարկների ներկայացում՝ ուղղված երեխաների և տարեցների խնամքի ծառայությունների միջազգային չափանիշների և լավագույն փորձի համապատասխանեցմանը:

Ակնկալվող արդյունքներ

- Տարեցների խնամքի գործող ծառայությունների համապարփակ գնահատում՝ հիմնված գործող չափորոշիչների վրա:
- Տարեցների խնամքի ծառայությունների լավարկված և նոր մոդելներ՝ հիմնված տեղական և միջազգային փորձի, քաղված դասերի և ոլորտում առկա մարտահրավերների վրա:
- Երեխաների խնամքի գործող ծառայությունների համապարփակ գնահատում:
- Երեխաների խնամքի ծառայությունների լավարկված և նոր մոդելներ՝ հիմնված տեղական և միջազգային փորձի, քաղված դասերի և ոլորտում առկա մարտահրավերների վրա:
- Ֆինանսական վերլուծության հաշվետվություն, որը կներառի երեխաների և տարեցների խնամքի գործող ծառայությունների մատուցման, ինչպես նաև առաջարկվող մոդելների ծախսակառուցվածքը, ծախսարդյունավետությունը և կայունությունը՝ ուղեկցվող լավարկման առաջարկություններով:
- Իրավական դաշտի վերլուծության հաշվետվություն, որը կներառի երեխաների և տարեցների խնամքի ծառայությունների գործող օրենսդրական կարգավորումները, բացերը, անհամապատասխանությունները և լավարկման ենթակա ոլորտները՝ առաջարկելով օրենսդրական դաշտի համապատասխան փոփոխությունները:

Պահանջվող փորձառություն

- Իրավագիտության, սոցիալական պաշտպանության, հանրային քաղաքականության, տնտեսագիտության, ֆինանսների կամ հարակից ոլորտների բակալավրի աստիճան,
- Առնվազն 5 տարվա փորձ՝ ուղղված սոցիալական քաղաքականության մշակմանը, իրավական դաշտի վերլուծությանը, ծախսարդյունավետության/ծախսակազման վերլուծությանը:
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ սոցիալական պաշտպանության և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ ուղղված երեխաների և տարեցների խնամքի ծառայություններին:

- Գործնական հմտություններ իրավական և ոլորտային քաղաքականության դաշտի վերլուծության բնագավառում՝ ներառյալ իրավական դաշտի ուսումնասիրության արդյունքում բացերի վերհանման, դրանց վերացման ուղղությամբ համապատասխան իրավական ակտերում առաջարկների ներկայացման կարողությունը:
- Սոցիալական պաշտպանության ոլորտում ծախսարդյունավետության/ծախսակազման աշխատանքների իրականացման գործնական փորձառություն:
- Վերլուծական մտածողության, խնդիրներ լուծելու հմտությունների առկայություն՝ հիմնվելով սոցիալական պաշտպանության և իրավական ոլորտներում համապատասխան կարգավորումներ/լուծումներ մշակելու ունակության վրա:
- Պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ աշխատելու փորձ՝ քաղաքականության և կանոնակարգերի մշակման, իրականացման իրականացման ուղղությամբ:
- Հաղորդակցման գերազանց հմտություններ, ներառյալ իրավական և քաղաքականության հայեցակարգերը տարբեր շահագրգիռ կողմերին ներկայացնելու կարողություն,
- Հայերենի և անգլերենի գրավոր և բանավոր տիրապետում:

Դիմելու ընթացակարգը

Հետաքրքրված անձինք/ընկերությունները պետք է ներկայացնեն.

- Կազմակերպության փորձառությունը և համապատասխան փորձագետների ինքնակենսագրականները (անհատ փորձագետների փորձագետների դեպքում՝ միայն ինքնակենսագրականները):
- Տեխնիկական առաջարկը, ներառյալ աշխատանքային պլանը:
- Ֆինանսական առաջարկ (ներառյալ ծախսերի մանրամասն նկարագրությունը):
- Ուղեկցող նամակ դիմողի սոցիալական պաշտպանության համապատասխան ոլորտում հետազոտական աշխատանք իրականացնելու փորձի վերաբերյալ (1 էջից ոչ ավելին):

- Սոցիալական պաշտպանության ոլորտում հետազոտական աշխատանքների կատարման հետ կապված նախորդ աշխատանքների օրինակներ (ուսումնասիրություններ, զեկույցներ, հոդվածներ, հրապարակումներ և այլն):
- Երկու տեղեկատուի կոնտակտային տվյալներ, ովքեր կարող են փաստել թեկնածուի փորձի և մասնագիտական որակավորման մասին:
- Հասանելիություն մինչև 3 ամիս՝ սկսած 2024 թվականի հունիսից:

Հնարավոր է դիմել նաև որպես փորձագիտական խմբով:

Դիմելիս վերը նշված փաստաթղթերը պետք է ներկայացվեն հետևյալ էլ. հասցեով՝ procurement.armenia@peopleinneed.net, թեմայի տողում նշելով Երեխաների և տարեցների խնամքի ծառայություններ/Սյունիք PSSP:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է հունիսի 24, 2024թ.

Հարցազրույցի կհրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: